

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱԿՈՈՒՊՑԻՈՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՏԻԱՆԵՐՈՎ ՈՒ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՏԱՆՁՆԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեության ոլորտում հակակոռուպցիոն ռազմավարությունն իրականացվում է հետևյալ երկու հիմնական ուղղություններով.

- Հանձնաժողովի գործունեության հակակոռուպցիոն երաշխիքների ամրապնդում.

- պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերի՝ տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրությանը համապատասխանության կապակցությամբ դիտանցումների միջոցով դրանցում պարունակվող կոռուպցիոն ռիսկերի բացահայտում, վերացման հիմքերի ստեղծում:

Վերոնշյալ ուղղություններով գործողությունները համակարգելիս Հանձնաժողովը որպես հիմք է ընդունում Հայաստանի Հանրապետության կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր): Ելնելով իր խնդիրներից և գործառույթներից Հանձնաժողովը Ծրագրի շրջանակներում իրականացնում է ինչպես իրեն՝ որպես պատասխանատու կատարողի, վերապահված անմիջական պարտավորությունները, այնպես էլ Ծրագրով նախատեսված այլ խնդիրներ: Դրանք են.

1. Օրենքների և այլ իրավական ակտերի հրապարակայնության ապահովում

Նշված խնդրի շրջանակներում Հանձնաժողովի կողմից իրականացվում են.

- Հանձնաժողովի կողմից «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք), դրա փոփոխությունների և լրացումների, Հանձնաժողովի նորմատիվ և անհատական որոշումների հրապարակում որոշակի պարբերականությամբ լույս ընծայվող տեղեկագրում և դրա՝ պետական մարմինների և ոլորտի խնդիրներով շահագրգիռ կազմակերպությունների շրջանում առաքման ապահովում.

- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, դրա փոփոխությունների և լրացումների, Հանձնաժողովի նորմատիվ իրավական ակտերի տեղադրում ինտերնետային կայքում (www.competitionpolicy.am) և դրա համալրում:

Միջազգային դոնոր կազմակերպություններից ակնկալվող տեխնիկական օժանդակության շրջանակներում նախատեսվում է նշված ինտերնետային կայքի պարբերական թարմացում, ինչպես նաև տնտեսվարող սուբյեկտների և սպառողների կողմից on-line կարգով Հանձնաժողով դիմում-բողոքների ներկայացման հնարավորության նախատեսում, նման դիմում-բողոքների օրինակելի ձևերի զետեղում:

2. Օրենքների և այլ իրավական ակտերի միջև եղած հակասությունների, կոռուպցիային նպաստող սողանքների վերացում

Հանձնաժողովն այս խնդրի կենսագործման ուղղությամբ Օրենքի 2-րդ և 19-րդ հոդվածների հիման վրա իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերում հակամրցակցային դրույթների բացառման և դրա միջոցով կոռուպցիային նպաստող սողանքների վերացման նպատակով այդ ակտերի

նախագծերի վերաբերյալ առաջարկությունների և դիտողությունների ներկայացում, գործողության մեջ դրված ակտերի պարբերական մոնիտորինգի անցկացում:

Հանձնաժողովի 2004 թվականի գործունեության ընթացքում քննարկված՝ վարչական խոչընդոտ պարունակող կոռուպցիոն սողանցքի օրինակ է հանդիսանում Երևանի Քանաքեռ-Զեյթուն համայնքի ավագանու 2001 թվականի օգոստոսի 24-ի թիվ 5/17 որոշումը, որով «Էգա» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրվել էր համայնքի տարածքում գովազդային վահանակների տեղադրման և սպասարկման բացառիկ իրավունք: Հանձնաժողովի եզրակացության հիման վրա նշված ակտը վերացվել է:

Իրավական ակտում կոռուպցիային նպաստող սողանցքի օրինակ է հանդիսանում նաև Հանձնաժողովի վարությամբ ներկայումս քննարկվող հարցը, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի սեպտեմբերի 20-ի թիվ 581 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետություն դեղերի և դեղանյութերի ներմուծման և արտահանման կարգով» սահմանված ներմուծման հավաստագիր տալու համար անցկացվող փորձաքննության վերաբերյալ դրույթներին: Խնդիրը վերաբերում է դեղերի ներմուծման և արտահանման ոլորտներում գրանցված դեղերի հետ նույնականացման պայմանների և ընթացակարգերի անորոշությանը, կամայական պահանջների սահմանմանը և գրանցված դեղերի վերաբերյալ տեղեկատվության անհասանելիությանը, ինչը կարող է հանդիսանալ կոռուպցիոն դրսևորումների առաջացման պատճառ՝ դեղերի ներմուծման և արտահանման հավաստագրերի տրամադրման գործընթացում խտրական վարչարարության կիրառման և գրանցված դեղերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրման անհիմն սահմանափակումների դրսևորման միջոցով:

Խնդիրը քննարկվել է Հանձնաժողովի 2005 թվականի հունիսի 1-ի նիստում: Քննարկման արդյունքում ընդունվել է «Դեղերի ոլորտի ապրանքային շուկաներում մրցակցության սահմանափակումների մասին» թիվ 44-Ս որոշումը, որով Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարությանը՝

ա) երկամսյա ժամկետում՝ սահմանել դեղերի նմուշների նույնականացման և փաստաթղթային փորձաքննության իրականացման հստակ կանոններ, ինչպես նաև հաստատել գրանցված դեղերի՝ նոր գրանցում չպահանջող փոփոխությունների ցանկը և Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը ներկայացնել ներմուծման նպատակով փորձաքննության ծախսերի գնացուցակը:

բ) «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության կողմից դեղեր ներմուծող տնտեսվարող սուբյեկտներին առաջադրվող պահանջները համապատասխանեցնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:

Միևնույն ժամանակ, Հանձնաժողովի գործունեության նախորդ ժամանակաշրջանի վերլուծության արդյունքների հիման վրա աշխատանքներ են տարվում ապրանքային շուկաների սահմանների, ինչպես նաև դրանցում գործող տնտեսվարող սուբյեկտների գերիշխող դիրքի որոշման մեթոդաբանության կատարելագործման ուղղությամբ, այն հաշվով, որ շուկաների սահմանները որոշվեն տնտեսական համակողմանի չափանիշների և վերլուծությունների հիման վրա, ինչպես նաև հնարավորություն տրվի հստակորեն ամրագրել այդ շուկաներում գերիշխող տնտեսվարող սուբյեկտներին:

Հանձնաժողովի գործունեության հիմնական նպատակներից է հանդիսանում նաև տնտեսության ստվերային շրջանառության՝ որպես տնտեսական մրցակցությունը խաթարող հիմնական գործոններից մեկի դեմ պայքարը: Տարբեր ապրանքային շուկաներում առկա ստվերային շրջանառության որոշակի ծավալը էապես խոչընդոտում է ձեռնարկատիրական հավասար պայմաններում տնտեսվարող սուբյեկտների բարեխիղճ մրցակցությանը՝ հանգեցնելով այդ շուկաներում հակամրցակցային տարաբնույթ դրսևորումների (գերիշխող դիրքի չարաշահումներ, անբարեխիղճ մրցակցություն և այլն): Միևնույն ժամանակ, ապրանքային շուկաներում ստվերային շրջանառության տեսակարար կշիռը հաճախ կասկածի տակ է դնում նաև Հանձնաժողովի գործունեության ընթացքում այդ ապրանքային շուկաների իրացման ծավալների, դրանցում տնտեսվարող սուբյեկտների զբաղեցրած դիրքի որոշման արդյունքների ճշգրտությունը:

Վերոնշյալից ելնելով, ինչպես նաև հաշվի առնելով, որ ստվերային շրջանառությունը հանդիսանում է պետության տնտեսական քաղաքականությունը խաթարող հիմնական կոռուպցիոն ռիսկերից մեկը, Հանձնաժողովն այդ ուղղությամբ ակտիվորեն համագործակցում է հարկային, մաքսային մարմինների, վիճակագրական ծառայության և այլ պետական մարմինների հետ: Այսպես, տարբեր ապրանքային շուկաներում վերլուծություններ իրականացնելիս Հանձնաժողովը տեղեկատվություն է ստանում ինչպես նշված մարմիններից, այնպես էլ անմիջականորեն տնտեսվարող սուբյեկտներից: Այդ երկու տեղեկատվական բազաների համադրման արդյունքներով հաճախ հնարավոր է դառնում որոշել ապրանքային շրջանառության կոնկրետ ոլորտների «ստվերը» (պետական մարմինների տրամադրած տեղեկությունների անհամապատասխանության հիման վրա), գնահատել դրա ծավալները և կառուցվածքը: Նշված վերլուծության արդյունքները ներկայացվում են իրավասու մարմինների քննարկմանը: Բացի այդ, Հանձնաժողովի որոշմամբ պետական բյուջե փոխանցման ենթակա՝ տնտեսվարող սուբյեկտների հակամրցակցային գործողությունների համար օրենքի խախտման հետևանքով ստացված շահույթի ճշտության որոշման հարցով Հանձնաժողովը հարցում է ներկայացնում հարկային պետական ծառայությանը: Դրա միջոցով վերջինիս համար լրացուցիչ հնարավորություն է ընձեռվում ստուգելու կոնկրետ տնտեսվարող սուբյեկտների գործունեության օրինականությունը:

Ստվերային տնտեսության առկայությամբ պայմանավորված կոռուպցիոն ռիսկերի կանխարգելմանն է միտված նաև այն ապրանքների ցանկն ընդլայնելու նախաձեռնությունը, որոնց արտադրության, շրջանառության ֆիզիկական ծավալների և գների վերաբերյալ, ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի թիվ 299 որոշման համաձայն, հարկ վճարողները հաշվետվություններ են ներկայացնում հարկային մարմիններ: Այդ կապակցությամբ 2005 թվականի ապրիլ ամսին Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության վարչապետին՝ առաջարկելով փոփոխություն կատարել կառավարության վերոնշյալ որոշման մեջ՝ դրանով հաստատված ցանկում ներառելով հատկապես այն ապրանքները, որոնք ներկայացնում են սոցիալական մեծ նշանակություն: Կարծում ենք, որ Հանձնաժողովի նշված նախաձեռնության ընդունման դեպքում էապես կամրապնդվեն այդ ապրանքների արտադրությունը և շրջանառությունն ընդգրկող տնտեսական գործունեության ոլորտներում պետական վերահսկողության գործառնությունները, ինչը, իր հերթին, կնպաստի այդ ոլորտներում «ստվերի» կրճատմանը:

Վերոգրյալ լրամշակմանը վերաբերող որոշման նախագիծը կարծիքի է ներկայացվել շահագրգիռ մարմիններ. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունն առաջարկել է տվյալ ապրանքային շուկայում մրցակցությանն առնչվող առկա հիմնախնդիրների բացահայտման նպատակով ցանկում ընդգրկել նաև հետևյալ ապրանքատեսակների անվանումները՝ ձուկ և ձկան պահածոներ, փայտանյութ, կոշկեղեն, կահույք, ձավարեղեն, ինչպես նաև մուրաբաների և ջեմի տողերը միացնել մեկ հերթական համարի տակ: Նշված առաջարկությունն ընդունվել է Հանձնաժողովի կողմից: Միևնույն ժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր հարկային պետական ծառայության կարծիքով, ցանկի ավելացումը և հատկապես ապրանքների ենթախմբերի ներառումը վաղաժամ է և կստեղծի լրացուցիչ խնդիրներ հարկային մարմնում այդ տեղեկությունների հաշվառման, ամբողջական մշակման և հետագա իրացման հետ: Ըստ հարկային ծառայության՝ առավել նպատակահարմար կլինի, եթե ցանկում նշված տեղեկությունների հավաքագրումն իրականացվի ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից: Առարկությունը չի ընդունվել, քանի որ ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 1-ի թիվ 299 որոշման հիման վրա հարկային ծառայության կողմից արդեն իսկ հաշվառվում և մշակման են ենթարկվում ցանկում ներառված ապրանքների վերաբերյալ տեղեկությունները, իսկ նախագծով ընդամենն առաջարկվում է ընդլայնել այդ ցանկը: Բացի այդ, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից տեղեկատվությունը հավաքագրվում և մշակվում է հիմնականում ընտրանքային եղանակով, ինչը հնարավորություն չի ընձեռնում կոնկրետ ֆիքսել առանձին ապրանքների իրացման ֆիզիկական ծավալները, որն իր հերթին անհնարին կդարձնի ապրանքային շուկաների ուսումնասիրությունը և այդ շուկաներում մրցակցության իրավիճակի ռեալ գնահատումը:

Ներկայումս, պետական-իրավական փորձաքննության նպատակով, նախագիծը ներկայացված է Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն:

3. Բիզնեսի և պետական ծառայությունների միջև միջնորդ մասնագիտական կառույցների ձևավորում

Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության հիմնական խնդիրներից մեկը՝ ոլորտը կարգավորող պետական մարմինների և տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցությունը, Հանձնաժողովն իրականացնում է Հահագրգիռ հասարակական կազմակերպությունների և միջազգային ու օտարերկրյա կառույցների ուժերի համակողմանի ներգրավմամբ:

Այսպես, տարբեր ապրանքային շուկաների մասնակից տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ մրցակցության գործողությունների, գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության դրսևորումների կանխարգելման, դրանց նկատմամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների հակամրցակցային ակտերի հայտնաբերման և վերացմանն ուղղված Հանձնաժողովի գործառնություններն իրականացվում են տարբեր հասարակական կազմակերպություններից ստացվող դիմումների համաձայն: Այդ հասարակական կազմակերպությունների թվին են դասվում սպառողների շահերի պաշտպանությանը կոչված միավորումները (Հայաստանի Հանրապետության սպառողների միություն, Հայաստանյան PR ասոցիացիա և այլն), ձեռնարկատիրության զարգացման հիմնախնդիրներով զբաղվող կազմակերպությունները (Հայաստանի գործարարների և արդյունաբերողների միություն, Հայաստանի առևտրականների ասոցիացիա և այլն), գործարար որոշակի ոլորտի խնդիրներով զբաղվող կազմակերպություններ (Դեղեր ներմուծող և արտադրող առևտրային իրավաբանական անձանց միություն և այլն):

Տնտեսվարող սուբյեկտներից տեղեկատվության ստացման մեխանիզմների պարզեցման ու հստակեցման, դրանց շրջանակում տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության և դրանով սահմանված պատասխանատվության միջոցների վերաբերյալ իրազեկության բարձրացման և համագործակցության մթնոլորտի ձևավորման հարցերով Հանձնաժողովը ակտիվորեն համագործակցում է նաև միջազգային ու օտարերկրյա դոնոր կազմակերպությունների հետ: Դրանցից են Տնտեսական համագործակցության և զարգացման միջազգային կազմակերպությունը (OECD), Հայ-եվրոպական իրավական և քաղաքական հարցերով խորհրդատվական կենտրոնը (AEPLAC), Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության (USAID) առևտրային իրավունք և տնտեսական կարգավորման ծրագրի համակողմ Bearing Point ընկերությունը: Այդ կազմակերպությունների ջանքերով Հայաստանում վերջին մեկ տարում լայն ընդգրկում ունեցող սեմինարներ և տեխնիկական օժանդակության ծրագրեր են անցկացվել, որոնց հիմնական նպատակներից է հանդիսացել տնտեսական մրցակցության պաշտպանության քարոզչության շրջանակներում ոլորտին առնչվող հանրամատչելի ձեռնարկների նախապատրաստումը և գործարար տարբեր միջավայրերում դրանց լայնածավալ սփռումը:

4. Լիցենզավարման ենթակա գործունեության տեսակների կրճատում.

Լիցենզավորումը՝ որպես պետության տնտեսական քաղաքականության կարգավորման գործիք, տնտեսական մրցակցության պաշտպանության համատեքստում ընդունված է համարել որպես տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելու հիմնական վարչական խոչընդոտներից մեկը: Այդ իմաստով, լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների համալրման, իրավասու պետական մարմինների կողմից լիցենզավորման ինտիտուտի խտրական կիրառման հարցերը գտնվում են Հանձնաժողովի մշտական ուշադրության ներքո: Հանձնաժողովը պարբերաբար իր մտահոգություններն է ներկայացրել լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների կրճատման, լիցենզավորման խտրական ընթացակարգերի վերացման խնդիրների կապակցությամբ:

Այսպես օրինակ, դեղերի առուվաճառքի ոլորտում գործող լիցենզավորման երկու ընթացակարգերի՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից պարզ ընթացակարգով լիցենզավորվող «Դեղերի առևտուր» և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կողմից բարդ ընթացակարգով լիցենզավորվող «Դեղատնային գործունեություն» գործունեության տեսակների կապակցությամբ 2003-2004 թվականներին Հանձնաժողովն առաջարկել է միևնույն շուկայում մրցակցային հավասար պայմաններ ապահովելու նպատակով հստակ տարանջատել գործունեության նշված երկու տեսակները: Հարցի կապակցությամբ կազմակերպվել են համատեղ քննարկումներ, ՀՀ վարչապետի մոտ հրավիրվել է խորհրդակցություն, որի արդյունքում հանձնարարվել է ՀՀ արդարադատության նախարարությամբ՝ արված առաջարկությունների հիման վրա նախապատրաստել եւ կառավարություն ներկայացնել «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով հիշյալ խնդիրը կլուծվի:

5. Պետական գնումների հրապարակայնության և քափանցիկության ապահովում.

Պետական գնումների գործընթացում տնտեսվարող սուբյեկտների հավասար մրցակցային հնարավորությունների ապահովումը և վարչական անհիմն խոչընդոտներից պաշտպանությունը հանդիսանում է Հանձնաժողովի ուշադրության առարկա խնդիրներից մեկը:

Այսպես օրինակ, 2004 թվականի ընթացքում Հանձնաժողովը քննարկել է Հայաստանի Հանրապետության պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքների պետական գնումների կազմակերպման գործընթացը: Ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ 2001-2003 թվականներին այդ աշխատանքների իրականացումը, մեկ աղբյուրից գնումների, մեկ աղբյուրից գնանշման կամ մրցույթի արդյունքներով հաղթելու ձևերով, հանձնվել է մեկ՝ «Հայավտոճան» փակ բաժնետիրական ընկերությանը: Վերջինս, իր հերթին, ենթակապալային հիմունքներով այդ աշխատանքների կատարումը վերապահել է տարածաշրջանային ճանապարհաշինարարական ընկերություններին: Արդյունքում իմաստագրվել է մրցույթի անցկացման նպատակը՝ վարչական խոչընդոտ ստեղծելով այդ ոլորտում տնտեսվարող սուբյեկտների ազատ մրցակցության համար: Նշվածի հիման վրա Հանձնաժողովը դիմել է Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությամբ՝ ձեռնարկելու համապատասխան միջոցներ այդ աշխատանքների գնումների կազմակերպման գործընթացում տնտեսական մրցակցության ապահովման ուղղությամբ: Հանձնաժողովի միջամտության արդյունքում ներկայում ավտոճանապարհների պահպանման և շահագործման աշխատանքների պետական գնումների մրցութային գործընթացում հայտեր են ներկայացնում տասնյակ ճանապարհաշինարարական ընկերություններ:

6. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում լրացումների և փոփոխությունների կատարման միջոցով Հանձնաժողովի իրավասությունների և գործառույթների հստակեցում, Հանձնաժողովի կողմից տույժերի կիրառման ընթացակարգերի կոնկրետացում, Հանձնաժողովի կողմից տեղեկությունների հավաքագրման իրավասությունների ընդլայնում.

Ծրագրի 4.36-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովի կողմից մշակվել է Օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին օրենքի նախագիծը, որն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի դեկտեմբերի 25-ին: Դրանով, մասնավորապես՝

- սահմանվել է Հանձնաժողովի միատուր իրենց առնչվող հարցի քննարկման մասին տնտեսվարող սուբյեկտներին ծանուցման հասկացությունը և կարգը.

- հստակեցվել է Օրենքի 7-րդ հոդվածի առաջին մասի «ա» կետով սահմանված՝ գերիշխող դիրքի չարաչափան դրսևորումների վերաբերելիությունը նաև մրցակից չունեցող (եական մրցակցության չհանդիպող) տնտեսվարող սուբյեկտներին.

- որոշակիացվել է Հանձնաժողովի որոշման հիման վրա տնտեսվարող սուբյեկտների կողմից տեղեկատվության ներկայացման պարտավորության կատարման կարգը:

Հանձնաժողովը, Օրենքի վերոնշյալ փոփոխություններից բացի, հակակոռուպցիոն ռազմավարության շրջանակներում շարունակում է իրականացնել իր խնդիրների և գործառնությունների օրենսդրական կատարելագործման որոշակի քայլեր: Մասնավորապես, Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հետ համատեղ, Հանձնաժողովը մշակել է Օրենքի լրամշակումներին վերաբերող օրինագիծ, որի հիմնական խնդիրներն են հանդիսանում՝

- տնտեսվարող սուբյեկտների կողմից գերիշխող դիրքի չարաշահման հնարավոր դրսևորումների հստակեցումը (որպես չարաշահման դրսևորում այլ տնտեսվարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելու (սահմանափակելու) կամ շուկայից նրանց դուրս մղելու եղանակի հավելում):

- գերիշխող դիրքը չարաշահող տնտեսվարող սուբյեկտների ապախոշորացման մեխանիզմի որոշակիացումը (ապախոշորացման (տնտեսվարող սուբյեկտների բաժանման, առանձնացման, փայտաճեղքի կամ միջոցների օտարման) որոշման կայացում միայն 1 տարվա ընթացքում գերիշխող դիրքի չարաշահման երկու կամ ավելի դրսևորում թույլ տված տնտեսվարող սուբյեկտների հանդեպ և այդ որոշման կատարման համար 6-ամսյա ժամկետի ամրագրում):

- Հանձնաժողովի հետազոտությունների ընթացքում տնտեսվարող սուբյեկտների կողմից հարուցվող հնարավոր անհիմն խոչընդոտների վերացումը. (տնտեսվարող սուբյեկտի կողմից անհրաժեշտ փաստաթղթեր և այլ տեղեկատվություն չներկայացնելու կամ այլ կերպ խոչընդոտելու դեպքում իր տրամադրության տակ առկա փաստաթղթերի և այլ տեղեկատվության հիման վրա Հանձնաժողովի որոշումների կայացման իրավասության ամրագրում):

- գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կենտրոնացված ռեստորում գրանցված սուբյեկտների կողմից տնտեսական մրցակցության պաշտպանության մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողության իրականացման նպատակով այդ տնտեսվարող սուբյեկտների կողմից Հանձնաժողով պարբերական տեղեկատվություն ներկայացնելու պարտավորության ամրագրումը:

- ելնելով գործառնությունների առանձնահատկություններից՝ Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթների՝ առավելագույնը 90-օրյա ժամկետի սահմանումը:

- Օրենքի դրույթների խախտումների համար Հանձնաժողովի կողմից պատասխանատվության միջոցների կիրառման կարգի փոփոխումը՝ տուգանքների չափը նախ փոխկապակցելով տնտեսվարող սուբյեկտի նախորդ օրացուցային տարվա իրացման ծավալի (հասույթի) հետ և, ապա, սահմանելով այդ իրացման ծավալից տուգանքի հաշվարկման ամրագրված (վարչական հայեցողականությունը բացառող) տոկոսադրույթների կիրառում:

- անբարեխիղճ մրցակցության, ինչպես նաև Հանձնաժողովի որոշումների չկատարման համար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ պատասխանատվության միջոցների սահմանումը՝ միաժամանակ հանելով տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տվող դրույթը՝ օրենքի խախտման հետևանքով տնտեսվարող սուբյեկտների կողմից ստացված շահույթի՝ պետական բյուջե փոխանցման վերաբերյալ:

Օրենքի լրամշակումների վերոնշյալ առաջարկությունները կառավարության օրենսդրական նախաձեռնությամբ ներկայացվել են Ազգային ժողով և ընդունվել 2005 թվականի մայիսի 4-ին: Օրենքը ստորագրվել է Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից մայիսի 30-ին և ուժի մեջ մտել՝ հունիսի 20-ից:

Հանձնաժողովի կողմից աշխատանքներ են տարվում նաև տնտեսական մրցակցության օրենսդրության հեռանկարային բարեփոխումների և այն միջազգային առաջավոր փորձին համապատասխանեցնելու ուղղությամբ: Այդ կապակցությամբ Հանձնաժողովին տարբեր միջազգային ծրագրերով ցուցաբերվում է խորհրդատվական օժանդակություն: Նշված միջազգային փորձագիտական գնահատականների և Հանձնաժողովի իրավակիրառ փորձի հիման վրա կատարված եզրակացությունների

հիման վրա նախատեսվում է ընթացիկ տարում ներկայացնել օրենսդրական լրամշակումների նոր փաթեթ:

Հանձնաժողովի գործունեության ոլորտում միջազգային կոնվենցիաներով ու համաձայնագրերով Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է հետևյալ պարտավորությունները.

- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջև կնքված «Գործընկերության և համագործակցության համաձայնագրի» հիման վրա մշակված ազգային ծրագրի շրջանակներում նախատեսվում է տնտեսական մրցակցության պաշտպանության Հայաստանի Հանրապետության օրենսդրության մոտարկումը Եվրամիության ստանդարտներին: Այդ կապակցությամբ, նշված ծրագրի մշակման աշխատանքների համակարգման հանձնաժողովի շրջանակներում ձևավորվել է «Մրցակցություն և պետական օժանդակություն» աշխատանքային խումբը: Վերջինիս կողմից մշակվել է օրենսդրության մոտարկման աշխատանքների կատարման ժամանակացույց, միջոցներ են ձեռնարկվում այդ աշխատանքների իրականացման ուղղությամբ.

- ի թիվս ԱՊՀ այլ պետությունների համապատասխան մարմինների՝ Հանձնաժողովը, «Համաձայնեցված հակամենաշնորհային գործունեության մասին» միջպետական պայմանագրի հիման վրա անդամակցում է Անկախ Պետությունների Համագործակցության երկրների հակամենաշնորհային քաղաքականության միջպետական խորհրդին: Այդ խորհրդի հիմնական խնդիրներից է հանդիսանում անդամ պետությունների հակամենաշնորհային քաղաքականության համակարգումը, ոլորտի իրավասու մարմինների համագործակցության օրակարգի ձևավորումը: Անդամակցության շրջանակներում Հանձնաժողովը ակտիվորեն մասնակցում է ինչպես Խորհրդի պլենար նիստերին, այնպես էլ վերջինիս աշխատանքային տարբեր ծրագրերին և քննարկումներին:

Հակամենաշնորհային քաղաքականության ոլորտում համագործակցության շրջանակներում երկկողմ միջկառավարական համաձայնագիր է կնքվել Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի միջև, որն ուժի մեջ է մտել 2005 թվականի փետրվարի 7-ին: Նշված համաձայնագրի հիման վրա Հանձնաժողովը համագործակցում է Ուկրաինայի հակամենաշնորհային հանձնաժողովի հետ՝ տեղեկատվության փոխանակման և երկկողմ փոխօգնության այլ հարցերում:

Հայաստանի Հանրապետության
տնտեսական մրցակցության պաշտպանության
պետական հանձնաժողով